Կազմված է 27.12.2023թ. և բաղկացած է 3 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ Շիրակի մարզպետի 27. 12. 2023թ. թիվ 612- Ա որոշմամբ Շիրակի մարզպետ՝ Մ. Մուրադյան		Տպագրված է ընդամենը 5 օրինակ ՕՐԻՆԱԿ 4 **ԳՐԱՆՑՎԱԾ Է** ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 23.11.2012թ., ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 222.120.741814 ՀՎՀՀ 05539526 23.11.2012թ.-ին գրանցված կանոնադրության թիվ 0063 փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 11. 01. 2024թ. Աշխատակից՝

«ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

«Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության 1.1 կետի վերջին պարբերությունից հետո ավելացնել հետևյալը՝

«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» (գրանցված Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, պետական գրանցման համարը՝ 29.140.00653, ՀՎՀՀ՝ 05501939) փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման համաձայն՝ «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԲԸ (գրանցված՝ 17.01.1996թ.-ին և վերակազմավորված՝ 10.01.1997թ.-ին, գրանցման համար՝ 29.140.00653) վերանվանման արդյունքում և հանդիսանում է վերջինիս, ինչպես նաև «Շիրակի մարզի Գյումրի ավստրիական մանկական հիվանդանոց» պետական ձեռնարկության և «ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի Ավստրիական մանկական հիվանդանոց» պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը:

2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1651-Ն որոշման համաձայն՝ Ընկերությունը վերակազմակերպվել է «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ն Ընկերությանը միացնելու եղանակով և հանդիսանում է «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ (գրանցման համարը՝ 29.140.00653, ՀՎՀՀ՝ 05501939) իրավահաջորդը՝ 27.12.2023թ.-ին հաստատված փոխանցման ակտի համաձայն:

2. Կանոնադրության 4.2 կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ՝

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 4,901,800,000 (չորս միլիարդ ինը հարյուր մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 49,018 (քառասունինը հազար տասնութ) հատ 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմս:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 49,018 (քառասունինը հազար տասնութ) բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են վերջինիս կողմից:»:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՊԱՐԱՏ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
STAFF OF SHIRAK MARZPET OF THE REPUBLIC OF ARMENIA

02